

ՍՏԵՓԱՆ ՍԱԼԽԱՍՅԱՆՑ

(Ծննդյան 125-ամյակի առթիվ)

Ա. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Անցյալ դարի վերջերին և XX դարի կեսերին հայագետների փայլուն համաստեղության մեջ իր բազմազան ու բարձրարժեք գիտական ստեղծագործություններով արժանի տեղ է զբաղում հայագիտության մեծ երախտավորներից մեկը՝ քաջահմուտ բանասեր, անվանի լեզվաբան և մեծատաղանդ բառարանագիր Ստ. Մալխասյանցը:

Ստեփան Սարգսի Մալխասյանցը (1857—1947) ծնվել է Ախալցխայում: Սովորել է տեղի Կարապետյան ծխական, ապա ուսական գավառական դըպրոցներում: 1874—1878 թթ. սովորել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում, բայց չավարտած դուրս եկել վերջին հինգերորդ դասարանից: 1881 թ. ընդունվում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը որպես ազատ ունկնդիր, իսկ 1887 թ.՝ ստացիոնար ուսանող: 1889 թ. ավարտում է այդ ֆակուլտետի հայ-սանսկրիտ և հայ-վրացական բաժինները: Գիտելիքների մեծ պաշարով զինված՝ նվիրվում է մանկավարժական աշխատանքին, երկար տարիներ հայոց լեզու ու գրականություն ավանդում և տեսչի պաշտոն վարում տարբեր դպրոցներում (Ախալցխայի Կարապետյան և Նղիս-գարյան, Թիֆլիսի Ներսիսյան, Հովնանյան, Դայանյան, էջմիածնի Գևորգյան ճեմարան, Ախալցխայի գիմնազիա): Նրա գործունեությունը, սակայն, չի սահմանափակվում սոսկ ուսուցչի և տեսչի գործնական սշխատանքով: Ուսումնակրթական կարևորագույն գործի բարելավմանը նախանձախնդիր մանկավարժը հաջողությամբ ծավալում է նաև գիտամանկավարժական եռանդուն գործունեություն՝ կազմելով դասագրքեր ու ձեռնարկներ, գրելով կրթական օջախների պատմությունը, գրախոսելով դասագրքեր, հրապարակելով հոգվածներ դպրոցների և առաջավոր ուսուցիչների մասին և այլն: Նա ամենահաջող կերպով ուսուցիչ-մանկավարժի աշխատանքին զուգակցում էր ուսումնագիտական գործը: «Միայն 1921 թվին, 64 տարեկան հասակումս», — գրում է նա, — որոշեցի թողնել մանկավարժական ասպարեզը¹: Այս ժամանակ Ստ. Մալխասյանցն արդեն ճանաչված գիտնական էր, հեղինակ բազմաթիվ մեծ ու փոքր արժեքավոր աշխատությունների: 1940 թ. նրան շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ honoris causa: 1943 թ. ընտրվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմի անդամ, և հենց ինքը, որպես ավագագույնը անդամների մեջ, բացում գիտության այդ մեծ կաճառի անդրանիկ ժողովը:

Դեռևս ճեմարանի աշակերտ՝ նա հրապուրվել է գեղարվեստական գրականությամբ, գրել բանաստեղծություններ, թարգմանություններ կատարել գեղարվեստական գրականությունից: Համալսարանի ուսանող եղած տարիներին նա ավելի հետաքրքրվում է հայագիտությամբ, դրսևորում իր ակնառու ընդունակություններն ու կարողությունները գիտության մեջ: Նրա հենց առաջին գիտական աշխատությունը, որ հրատարակվում է 1885 թ. (նվիրված էր Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) «Պատմություն տիեզերական»-ին), որպես հա-

¹ Հայրենի բացատրական բառարան. հ. 1, էջ 184:

չող ուսումնասիրություն՝ դիտական տեսությունով ու ծանոթագրություններով, արժանանում է մասնագետների ուշադրությանը և բարձր գնահատականին:

Վեց տասնամյակից ավելի նվիրվելով Հայագիտությանը, Ստ. Մալխասյանցը, հարստացրել է այն արժեքավոր հետազոտություններով ու մնացորդործերով: Իր երկարամյա բեղմնավոր գործունեության ընթացքում նա անդրադարձել է բազմաթիվ ու բազմազան մեծ ու փոքր հարցերի, յուրաքանչյուրի վերաբերյալ զրեւ դիտական բարձրարժեք հոգիածներ և ուսումնասիրություններ: Գիտական այս հարուստ ժառանգությունից մենք այստեղ կներկայացնենք երեքը՝ բանասիրականը, լեզվաբանականը և բառարանագրականը:

Հայ հին մատենագրության ուսումնասիրության և նրա գրավոր հիշատակարանները մասնագիտական ընթերցողների սեփականությունը դարձնելու գործում Մալխասյանցը կատարել է հսկայածափալ աշխատանք: Նա տարբեր ժամանակներում և զանազան հանդեսների ու պարբերականների մեջ («Մշակ», «Արարատ», «Արձագանք», «Մուրճ», «Տարադ», «Ազգագրական հանդես», «Արոր» և այլն) հրատարակել է գրախոսականներ՝ նվիրված Հայ հին մատենագրության ուսումնասիրություններին: Դրանք դիտական քննադատության հաջողված նմուշներ են, որոնց մեջ տրվում են գրախոսվող աշխատության դիտական վերլուծությունը, նրանց արժանիքների, թերությունների և հասարակական նշանակության իրական բնութագրերը: Այդ կարգի գրախոսություններից կարելի է նշել, օրինակ, «Եղիշեի Պատմություն Վարդանանց ըստ Անձեակցայաց օրինակի» (1892), «Գր. Խալաթյանց, Ջենոբ Գլակ (համեմատական ուսումնասիրություն)» (1894), «Ղազար Փարպեցու Հայոց պատմությունը և Վահան Մամիկոնյանի գրած թուղթը, թարգմ. Մինաս քահանա Տեր-Պետրոսյանց» (1896), «Գիրք թղթացի Մատենագրություն նախնայաց» (1901) և այլն:

Հայագիտության համար բացառիկ արժեք ունեն այն թարգմանությունները, որ կատարել է Մալխասյանցը Հայ հին մատենագիրների երկերից՝ գրաբարից աշխարհաբար: Խոսենք միայն երկուսի՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Փավստոս Բուզանդի «Պատմություն հայոց»-ի թարգմանությունների մասին: Առաջինը հրատարակվել է 1940 թ., երկրորդը՝ 1947 թ.:

Դիտենք, որ շատ վաղուց է զգացվել այդ (և մեր մյուս պատմագիրների) երկերի գրաբարից աշխարհաբար թարգմանության անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ դրանք ժամանակակից ընթերցողներին հասկանալի դարձնելու, նրանց նկատմամբ լայն հետաքրքրություն առաջ բերելու և գիտապատմական հետազոտություններն ու ուսումնասիրությունները մեծ շահով հեշտացնելու համար: Ասենք նաև, որ մեր մատենագիրների երկերի թարգմանությունը բոլորովին էլ հեշտ գործ չէ: Այդ ավելի է դժվարանում նրանով, որ ոչ մեկի բնագիրը մեզ չի հասել, իսկ մի քանի արտագրություններից հետո զբաղված գրիչները տեղ-տեղ աղավաղվել են և ընդմիջվել արտագրողների հավելումներով ու մեկնություններով: Այս գեո բոլորը չէ: Դրանց լույս աշխարհ գալուց անցել էր ավելի քան 10—15 դար, իսկ տպագրությունից՝ մեկուկես-երկու հարյուրամյակ: Այդ մեծ ժամանակահատվածի ընթացքում առանձին գրքերով ու պարբերական մամուլի մեջ հայերեն ու օտար լեզուներով հրատարակվել են մեծ թվով ընդարձակ ու համառոտ ուսումնասիրություններ, որոնց մեջ վիճելի են դարձել շատ ու շատ հարցեր՝ սկսած հեղինակների անունների հավաստիությունից մինչև ապրած ու ստեղծագործած ժամանակը: Հաջող թարգմանություն գրելու բերելու համար հարկավոր էր ոչ միայն խոսակցական իմանալ թարգմանվող երկի յուրաքանչյուր նախադասության մեջ արտահայտված միտքը, պատմական անձերի գործունեության ու դեպքերի ողջ ընթացքը, այլև հաղթահարել մեծամեծ դժվարություններ՝ կապված բնագրի հետագա աղավաղումների, բազմաթիվ հարցերի վերաբերյալ առաջացած վիճերի ու տարակարծությունների և այլնի հետ: Հենց այդպիսին են Ստ. Մալխասյանցի թարգմանությունները: Նա թարգմանել է հմտորեն, գիտական բարձր մակարդակով: Դրան մեծապես նպաստել է այն, որ նա նախապես առանձին ուսումնասիրություններով քննել է թարգմանվող երկի մեջ շոշափված

կարևոր շատ խնդիրներ և պարզել վիճելի ոչ քիչ հարցեր: Այսպես՝ մինչև Մ. Խորենացու «Հայոց պատմության» թարգմանությունը Ստ. Մալխասյանցը դիմելու հրապարակել է ավելի քան 21 հոդված, ուսումնասիրություն, գրախոսություն Պատմահոր և նրա Պատմության մասին՝ «Մ. Խորենացու նոր աղբյուրը»², «Նորագույն կարծիքներ Մովսես Խորենացու մասին»³, «Սեբեոսի պատմությունը և Մ. Խորենացին»⁴ և այլն:

Փ. Բուդանդի «Հայոց պատմության» թարգմանությունից առաջ տպագրվել են՝ «Ուսումնասիրություն Փավստոս Բյուզանդի պատմության»⁵, «Մի նկատողություն Փավստոսի պատմության մասին»⁶ և այլն՝ թվով տասը:

Հայտնի է, որ Մ. Խորենացու Պատմությունը ունեցել է 12 հրատարակություն (ինը հայերեն, երեքը լատիներեն ու ֆրանսերեն) և թարգմանված է բաղամաթիվ լեզուներով: «Այս թարգմանությունների մեջ ճշտության կողմից լավագույն են համարվում Մխիթարյանների իտալերեն, էմիլի ռուսերեն և Ստեփանեի աշխարհաբար թարգմանությունները», — գրում է նա⁷: Բազմաթիվ ուղղումներով ու լրացումներով նա թարգմանությունները դարձնում է բնագրին ավելի մոտ ու հարազատ:



Մալխասյանցի ամեն մի թարգմանություն սկսվում է մի ընդարձակ «Ներածությունով», որի մեջ քննվում են պատմիչի կյանքի, ապրած ժամանակաշրջանի, պատմության աղբյուրների, նշանակության, լեզվի ու ոճի, բնագրերի, հրատարակությունների, թարգմանությունների հետ կապված կարևոր շատ հարցեր: Այս «Ներածությունների» մեջ հիանալի երևում են հեղինակի տրտալարգ ջանք ու հարգալից վերաբերմունքը մեր պատմիչների ու նրանց երկերի նկատմամբ, այլև գիտական այն կարևոր հայտնություններն ու նորությունները, որոնք վիթխարի նշանակություն ունեն հայագիտության համար:

Ինչպես բոլոր իսկական գիտնականները, Մալխասյանցը ևս կարողանում է փաստարկումների ուժեղ տրամաբանությամբ հիմնավորել իր առածը, համոզիչ դարձնել իր խոսքը: Մի տեղ, օրինակ, գրում է. «Խորենացին հայերենասեր է այս բառի ամենաազնիվ նշանակությամբ»: Եվ իր այդ միտքը հաստատելու համար ավելացնում է. Խորենացին «ցանկանում է տեսնել իր հայրենիքը փառավոր, անկախ, իր հայրենակիցներին՝ առաքինի, քաղաքակրթված, ապահով», «իր ազդու գրչով հարվածում է տգիտությունը, անգործությունը, մոլությունները, գովում է գիտությունը, օգտակար գործունեությունը, առաքինությունը: Նա ուրախակից է ազգի ուրախություններին, ցավակից է նրա ցավերին»⁸:

Ստ. Մալխասյանցը սովորություն ուներ միևնույն խնդրին անդրադառնալ մի քանի անգամ և տարբեր ժամանակներում: Սա հնարավորություն է

² «Մուրճ». 1892, № 12:

³ «Մշակ». 1898, № 120:

⁴ Սեբեոսի պատմությունը և Մ. Խորենացի: Մասնագրական ուսումնասիրություն. Թիֆլիս, 1899:

⁵ Վիեննա, 1896:

⁶ Zeitschrift für armenische Philologie. Bd 1. 1901, H. 1, S. 64—66.

⁷ Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1940, էջ XC:

⁸ Նույն տեղում, էջ LV:

տալիս, որ նա ավելի խորանա քննվող հարցերի մեջ, նոր ու համոզիչ փաստերով հաստատի կամ մերժի իր կամ ուրիշների այս կամ այն տեսակետը և դիտականորեն հիմնավոր ու ամբողջական դարձնի իր բանասիրական քննությունը։ Սրա լավ օրինակ է Բուդանյի «Հայոց պատմությունը», որի մասին Մալխասյանցը առաջին անգամ գրել է 1896 թ.։ Հետագայում ևս մի քանի անգամ անդրադարձել է դրան։ 1941 թ. գրված և 1947 թ. թարգմանության հրատարակությանը կցված ընդարձակ «Ներածությունը» հանդիսանում է այդ բոլորի եզրափակիչ օղակը։

Բուդանյի «Հայոց պատմություն» մեջ կան հակասություններ, «մի շարք տարօրինակություններ», շունի ժամանակագրություն, հաճախ է ընդմիջվում զեյդերի պատմական դարպագման ընթացքը և այլն։ Խնդիրն ավելի է բարդանում նրանով, որ այս ամենի մասին տարրեր ժամանակակերպում, սկսած Վարար Փարպեցուց, հայտնվել են ղանադան, հաճախ նույնիսկ իրարամերձ, կարծիքներ թե՛ հայ և թե՛ օտարազգի շատ անվանի մարդկանց կողմից։ Միքայել Չամչյան, Մկրտիչ Ալվերյան, Ղուկաս Ինճիճյան, Հովսեփ Գաթրիճյան, Գարեգին Զարհանալյան, Մկրտիչ էմին, Քերովբե Պատկանյան, Անտոն Գարադաշյան, Նորայր Բյուզանդացի, Հակովորոս Տաշյան, Նիկողայոս Մառ, Ղևոնդ Արիշան, Նիկողայոս Աղոնց, Մոնոկ Աբելյան, Սեն-Մարտեն, Ալֆրեդ Գուտշմիդ, — ահա ո՛ւմ հետ է վեճի մտնում Ստ. Մալխասյանցը, ի՛նչ պիտանակների տեսակետները պետք է մերժի կամ ընդունի նա V դարի խոշոր պատմիչ Փավստոս Բուզանդի ու նրա անմահ երկի հետ կապված հարցերում։ Իսկ վիճելի հարցերը շատ էին, կարևոր և բարդ. «Ո՞վ է այս Պատմության (Բուդանյի «Հայոց պատմության», — Ա. Գ.) հեղինակը, հա՞յ, թե մի օտարազգի. ի՛նչ առնչություն ունի գրքի վրա գրոշմված Փավստոս անունը գրքի հեղինակի հետ. ի՛նչ լեզվով է գրված Պատմությունը. հայերե՞ն, թե մի ուրիշ լեզվով, այսինքն՝ մեր ձեռքին եղած գրվածքը բնադի՞ր է, թե թարգմանություն, և՛րբ է գրված այս Պատմությունը, ինչո՞վ պետք է բացատրել վերոհիշյալ տարօրինակությունները»⁹։ Եվ խմբավորված ու դասդասված ներկայացնելով յուրաքանչյուր հարցի վերաբերյալ եղած կարծիքները, Մալխասյանցը համոզիչ փաստարկներով մերժում է անընդունելի, հիմնավորում ճիշտն ու հավաստին, առաջադրում նոր ու կարևոր խնդիրներ։ Նա, օրինակ, հիմնավորապես հաստատում ու համոզում է, որ Փավստոս Բուդանյը հույն չէ, այլ՝ հայ, որ նրա «Պատմությունը ինքնուրույն հայերեն գրվածք է և ոչ թե թարգմանություն», որ «Փավստոսի Պատմությունն անշուշտ գրված է հինգերորդ դարի երկրորդ կեսում, ուրեմն, գրված է հայերեն և հայի ձեռքով» (32)։

Պատմահայր Մովսես Խորենացուն և նրա անմահ երկին վերաբերող Ստ. Մալխասյանցի յուրաքանչյուր ուսումնասիրություն մի իսկական գլուխգործոց է հայ բանասիրական հարուստ գրականության մեջ։ Հայտնի է, որ ավելի քան երեք տասնամյակ բուռն վեճեր են գնացել Խորենացու Պատմության, օգտագործած աղբյուրների, ապրած ժամանակի, նույնիսկ նրա անձնավորության մասին։ Եղել են կարծիքներ, թե Խորենացու Պատմությունը գրվել է VIII դարում (Ա. Գուտշմիդ), ավելի ուշ ժամանակի գործ է, քան V դարը (Ա. Կարրեր), ստեղծվել է 750 թ. (Գր. Խալաթյան), այդ երկը հորինել է IX դարի հեղինակ և իր երկր վերագրելով V դարում ապրող մի ուրիշ հեղինակի՝ կեղծել է նրա պատմությունը (Գ. Տեր-Մկրտչյան), որ Խորենացին VII դարի եպիսկոպոս ոմն Մովսես Քերթոզն է (Ա. Զամինյան) կամ VIII դարի պատմիչ Ղևոնդ Նրեցը (Ն. Ակինյան) և այլն, և այլն։ Եղել են նույնիսկ «Սուտ Մովսես» հորջորջողներ։ Իսկ մեր օրերում ակադեմիկոս Հ. Մանանդյանը Խորենացուն նույնացնելով VIII դարի պատմիչ Ղևոնդ Նրեցի հետ և Պատմությունը գրված համարելով IX դարի սկզբում, վերջնականապես «լուծված» է համարում «Խորենացու առեղծվածք»¹⁰։

⁹ Փավստոս Բյուզանդ. Պատմություն հայոց. Երևան, էջ 7։

¹⁰ Հ. Մանանդյան. Խորենացու առեղծվածի լուծումը. Երևան, 1934։

Ստ. Մալխասյանցին լիովին հաջողվեց հերքել բոլոր այդ պնդումները, ապացուցել դրանց անհիմն լինելը, գիտական պարզություն մտցնել վիճելի հարցերի մեջ և հաստատապես վերականգնել ճշմարտությունը։ Ահա թե ինչպես է գնահատել մեծագույն հայագետներից մեկը՝ Մ. Աբեղյանը ակադ. Հ. Մանանդյանի տեսակետների դեմ՝ Մալխասյանցի առարկությունները. «Եվ ահա դուկտ. Ստ. Մալխասյանցը վերստին հանգես գալով մի ամբողջ գրքով՝ իրավացի կերպով հեզնում, ծաղրում է Մովսես Խորենացուն Ղևոնդ Երեցի հետ նույնացնողի և՛ մեթոդը, և՛ ասածները, և հիմնովին կետ առ կետ հերքում, ժխտում է Հ. Մանանդյանի փաստարկումները։ Այդ բոլոր փոխադարձ հերքումներից, ժխտումներից ու բացասումներից հետո՝ մեր պատմահայր ու քերականահայր Մ. Խորենացուն էլ ուրիշ բան չի մնում անել, բայց եթե ետ քաշվել ու նստել իր հին ու բնական տեղում—V դարում»¹¹։

Ստ. Մալխասյանցի գիտական վաստակը ավելի մեծ է լեզվաբանության բնագավառում։ Նա մեր ժամանակի ամենախոշոր հայ լեզվաբաններից է, մեծ հեղինակություն հայ լեզվաբանության մի բանի ճյուղերում։

Բազմազան ու բազմաբնույթ են եղել նրա գիտական հետաքրքրությունների շրջանակները այդ ասպարեզում։ Գրաբարի քերականական համակարգ, աշխարհաբար գրական լեզուների զարգացում, արդի հայերենի ձևաբանական կարգեր, բառերի կազմություն ու ստուգաբանություն, բարբառագիտություն, ուղղագրություն, տաղաչափություն, պատմագրական երկերի ու մամուլի լեզու, հրատարակչություն ու տպագրություն, գիր ու այբուբեն և, իհարկե, բառարանագրություն, — ահա սրանք են հայ լեզվաբանության այն հիմնական համակարգերն ու խնդիրները, որոնց ուսումնասիրությանը նվիրել է գիտական առանձին հոդվածներ ու աշխատություններ։ Գրանցից մի քանիսը կարևոր ներդրում են հայ լեզվաբանության մեջ («Գրաբարի համաձայնությունը», «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում», «Հայերեն բացատրական բառարան» և այլն)։

Ընդհանուր լեզվաբանության առանձին սկզբունքների և հայոց լեզվի տեսություն շատ հարցերի վերաբերյալ նա ունեցել է իր սեփական ըմբռնումներն ու մոտեցումը, որոնք արտահայտվել են հայերենին առնչվող նրա գրեթե բոլոր հետազոտությունների մեջ։ Ստ. Մալխասյանցը սկզբից եկել է իր առաջին հետազոտություններից սկսած, նախընտրեց լեզվաբանության պատմահամեմատական ուղղությունը և դարձավ նրա հետևորդներից մեկը մեր իրականության մեջ։ Նա նույնպես պաշտպանում է այն տեսակետը, որ հայերենը հընդ-եվրոպական լեզուներից մեկն է, նախալեզվի մի անկախ ու ինքնուրույն ճյուղը։ Հ. Հյուբշմանի մասկան առիթով գրած իր հոդվածում բարձր գնահատելով նրա «մատուցած ծառայությունը հայերեն լեզվի ուսումնասիրության դործում», գրում է. «Նրա (Հյուբշմանի—Ա. Գ.) ուսումնասիրությունների շնորհիվ հայերենը իբրև անկախ ուստ հնդկա-եվրոպական լեզվաբանի և իբրև միակ ներկայացուցիչ այդ ուստի... մեծ կարևորություն ստացավ» և հիացմունքով ավելադրում է. «Հայերենի դիրքը վերջնականապես որոշվեց հնդկա-եվրոպական լեզուների շարքում— մի շատ պատվավոր տեղ»¹²։ Մալխասյանցը Ա. Տոմսոնի՝ Թիֆլիսի բարբառի ուսումնասիրության ամենամեծ արժանիքը համարում է այն, որ նրա հեղինակը, հետևելով Հյուբշմանին, հմտորեն կիրառել է պատմահամեմատական առաջավոր մեթոդը¹³։

Ստ. Մալխասյանցը հետևել է պատմահամեմատական լեզվաբանության երկու հիմնական ուղղություններին՝ մերթ սոցիոլոգիականին, մերթ՝ երիտ-քերականությանը, իսկ առանձին հարցերում մնացել ինքնուրույն։ Երիտ-քերականների նման ընդունում է, որ լեզվի հնչյունական օրենքներն անխախտ են, և որ հնչյունափոխական օրենքները բացարձակ լինելով՝ բացառություններ չունեն, բայց լեզվական փոփոխությունների գլխավոր գործոնը համարում

¹¹ Մ. Աբեղյան. Հայոց հին գրականության պատմություն. գիրք 1, Երևան, 1944, էջ 258։

¹² «Մշակ». 1903, № 19, էջ 3։

¹³ «Մուրճ». 1901, № 5, էջ 252։

է՝ ոչ թե այդ «հնչյունական օրենքը», ինչպես կարծում էին երիտքերականները, այլ հասարակական բնույթի մի քանի ազդակներու նա բնորոշում է լեզվի հասարակական բնույթը, հանրության (ցեղ, ժողովուրդ, ազգ) լեզվի դոյությունը և այս հարցում նույնպես հեռանում երիտքերականներից, որոնց ըմբռնմամբ կան միայն անհատական լեզուներ։ Սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչներին նման բնորոշելով լեզվի էվոլյուցիոն զարգացումը (լեզվաբանական անընդհատություն) և անտեսելով որակական անցումները, Մալխասյանցը, սակայն, լեզվի մեջ տեղի ունեցող փոփոխությունները բացատրում է ոչ թե «անհատական լեզուներով» միջև եղած տարբերություններով, այլ նույն ազգ լեզուն կրող հասարակության կյանքում տեղի ունեցող անտեսական ու կոլոտուրական փոփոխությամբ։ «Լեզվի զարգացումը,— դրում է նա,— հետևանք է ժողովրդի զարգացման մտավորապես և տնտեսապես»¹⁴։ Նա սերտ կապ է տեսնում լեզվի և այդ լեզուն կրող կոլեկտիվի մտավոր զարգացման միջև։ «Լեզուն մտքի արտահայտիչն է բաների միջոցով»,— ասում է նա։ Լեզվի զարգացումը անշատ չպատկերացնելով ժողովրդի պատմությունից, նա որոշակի դեր է հատկացնում նաև աշխարհագրական պայմաններին և լեզվական տվյալ կոլեկտիվի ֆիզիոլոգիական առանձնահատկություններին։

Հայոց լեզվի տեսական հարցերում նույնպես նա միշտ չէ, որ պաշտպանել է պատմահամեմատական լեզվաբանության ներկայացուցիչների տեսակետը։ Այսպես, օրինակ. այն դեպքում, երբ Հյուբշմանը ժխտում էր V դարից առաջ հայ բարբառների դոյությունը և VIII դարի մեկնիչ Ստեփանոս Սյունեցու նշած «զրառան զեղերականս» համարում էր ոչ թե հայ բարբառներ, այլ ուրիշ ցեղախնի լեզուներ, Ստ. Մալխասյանցը պնդում էր հակառակը։

Ստ. Մալխասյանցը ճանաչված ու հայտնի գրաբարագետ էր։ Նա ոչ միայն զործնականորեն կատարելապես տիրապետում էր գրաբարին, այլև նրա տեսության լավագույն մասնագետն էր, խորապես գիտեր բոլոր օրինաչափությունները՝ իրենց բացառություններով ու փոքր շեղումներով։ Նրա գրաբարագիտական խոր գիտելիքներն ու լեզվական իրողությունների ճիշտ բնութագրումները հաշտալի երևում են մատենագիրների համեմատական տեսության հրատարակությունների մեջ, բանասիրական հետազոտություններում, գրաբարից աշխարհաբար թարգմանություններում, բազմաթիվ գրախոսականներում և գրաբարի քերականության գիտական ուսումնասիրություններում։ Նրա «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», որ ունեցել է երկու հրատարակություն (1891, 1910) և «Գրաբարի համաձայնությունը» (1892), որ Մեյլի գնահատմամբ «մի դասական քերականություն է», գրաբարի ձևաբանության ու շարահյուսության բարձրարժեք ուսումնասիրություններ են, երկար ժամանակ գործածության մեջ են եղել որպես հաջող դասագիրք-ձեռնարկներ և այսօր էլ մնում են իբրև գրաբարի քերականական համակարգի գիտական բարձրորակ հետազոտություններ։

Իբրև իսկական խոշոր լեզվաբան Ստ. Մալխասյանցը բնականաբար իր գիտական հետաքրքրությունների ոլորտից չէր կարող դուրս թողնել մի այնպիսի կարևոր բնագավառ, ինչպիսին հայ բարբառագիտությունն է։ Բարբառագիտական շատ հարցեր են հետաքրքրել նրան։ Գրի է առել բարբառային տեքստեր, կազմել բարբառային բառերի բառարան, քննել տեսական հարցեր և այլն։ Բարբառագիտական կարևոր արժեք ունի իր մայրենի խոսվածքով գրի առած տեքստերի ժողովածուն¹⁵։ Սրա մեջ զետեղված 128 ժողովրդական առակները, ավանդությունները, անեկդոտները, չափավոր խոսքերն ու ասմունքները գրի են առնված խոսվածքին կատարելապես տիրապետող լեզվաբանի կողմից և բարբառագիտության արդի պահանջներին համեմատ։ «Կարելի է առանց սխալվելու վառնալի ասել, թե այն լեզուն, որով գրի եմ առել այս առակները՝ ներկայացնում է Ախալցխայի բարբառ անցյալ դարի 60-ական թվականներին, կամ որ նույնն է՝ Կարինի հայոց բարբառը նույն դարի 30-ա-

¹⁴ Գրաբարի համաձայնությունը, էջ 7։

¹⁵ Առակներ, ավանդություններ, անեկդոտներ. Երևան, 1958։

կան թվականներին»¹⁶։ Աշխատությունը կցված բառարանը, որն ընդգրկում է 755 բարբառային բառեր (բնիկ ու փոխառյալ), ավելի է մեծացնում նրա բարբառագիտական արժեքը։

1887 թ. հրատարակվում է ռուս նշանավոր լեզվաբան Ա. Ի. Տոմսոնի «Լեզվաբանական հետազոտություն»¹⁷ աշխատությունը, որի մեծ մասը ներվիրված էր Ախալցխայի խոսվածքի հնչյունաբանության ու ձևաբանության գիտական նկարագրությանը։ Մալխասյանցը զգալի ճշտումներ, փոփոխություններ ու լրացումներ կատարելով մինչև գրքի հրատարակվելը՝ փաստորեն դառնում է հեղինակակից։

Ստ. Մալխասյանցը մի քանի գրախոսականներ է գրել բարբառագիտական ուսումնասիրությունների մասին։ Ուշագրավ են դրանցից հատկապես երկուսը, որոնք վերաբերում են հայ բարբառագիտության ռուսական դպրոցի երկու նշանավոր ներկայացուցիչների ուսումնասիրություններին։ Նա շատ բարձր է գնահատում Ա. Տոմսոնի «Թիֆլիս քաղաքի ժամանակակից հայերեն լեզվի պատմական քերականություն» մեծածավալ աշխատությունը, նշելով, որ Տոմսոնը բարբառային իրողությունները համեմատելով հնդեվրոպականի, գրաբարի, մասամբ էլ ուրիշ բարբառների համապատասխան երևույթների հետ, «հիմք է դրել հայերենի համեմատական քերականության՝ Թիֆլիսի բարբառի վերաբերմամբ», որ «Տոմսոնը եղել է մեթոդ ստեղծող, ճանապարհ բացող»¹⁸։ Իր երկու այլ գրախոսությունների մեջ, որոնք վերաբերում են Լ. Մանրյանցի «Հայ բարբառագիտության ուրվագծեր» երկմասանոց աշխատությանը¹⁹, նշում է, որ մինչև վերջին ժամանակներս «գավառական բարբառները արհամարհված և անտես էին եղած՝ իբր աղավաղություններ գուտ հայերեն լեզվի, աղբատ և տգեղ լեզուներ»²⁰ և համոզիչ բացատրում, որ հայ բարբառները ընդհանուր լեզվից են առաջացել, նրա ձյուղավորումներն են ու արժանի են մեծ ուշադրության։

Բարբառագիտական տեսական հարցեր է քննել նաև այլ բնույթի աշխատություններում։ «Գրաբարի համաձայնությունը» գրքի մեջ հատուկ քննություն է առնում մինչև V դարը հայ բարբառների գոյության խնդիրը և ճիշտ կերպով գտնում, որ «հայերենը ևս նախապատմական ժամանակում անշուշտ ունեցել է այլ և այլ բարբառներ» (10) և հիմնավորում իր այս տեսակետը ոչ միայն ասելով, թե «չկա լեզու, որ շունենա յուր բարբառները», այլև նրանով, որ Հայաստանի աշխարհագրական յուրահատուկ դիրքի և առանձնահատուկ պայմանների առկայությամբ (լեռներով ու գետերով անջրպետված գավառներ, կիսաանկախ նախարարություններ, փոխադարձ կապի բացակայություն և այլն) չէին կարող բարբառներ չլինել։ Նա գտնում է, որ գրաբարի համար հիմք է հանդիսացել հենց այդ բարբառներից մեկը, հավանաբար Արարատյանը։ «Այն լեզուն, որով Ս. Սահակ և Մեսրոպը թարգմանեցին Ս. Գիրքը՝ Հայաստանում գոյություն ունեցող բարբառներից մեկն էր լինելու, հավանորեն Արարատյան բարբառը» (11)։

Ժամանակակից հայոց լեզվի տեսության հարցերի քննությանն են նվիրված Ստ. Մալխասյանի մի քանի աշխատությունները։ Ուսումնասիրություններ է հրապարակել արդի հայերենի հոլովների, ուղղագրության, մամուլի լեզվի և ուրիշ հարցերի մասին։ Հաջող ուսումնասիրություններից կարելի է նշել «Հայացական հոլովը աշխարհագրարի մեջ»²¹ և «Դարձյալ հայցական հոլովը»²²։ Նր-

¹⁶ Նույն տեղում, էջ 12։

¹⁷ А. И. Томсон. Лингвистические исследования. Т. 1 (гл. 1). Краткий очерк фонетики и морфологии Ахалцыхского говора. СПб., 1887.

¹⁸ «Մուրճ». 1901, № 5, էջ 252։

¹⁹ Л. Мсеришц. Этюды по армянской диалектологии. Ч. I, М., 1897, ч. II, 1901.

²⁰ «Մշակ». 1897, № 69, էջ 2։

²¹ «Նոր դպրոց». 1908, № 1։

²² Նույն տեղում, 1909, № 11, 12։

կուսի փերնագրերից երևում է, թե սրանց մեջ պետք է քննված լինի միայն հայցական հոլովը, բայց այդպես չէ։ Երկուսի, մանավանդ առաջինի մեջ խոսվում է աշխարհաբարի բոլոր հոլովների մասին, որովում նրանց կադմոթյունն ու արտահայտած իմաստները, հիմնավորվում հոլովի ձևի ու բովանդակության սերտ կապը՝ «Հոլովը՝ լոկ բառի ձև չէ, — դրում է նա, — հոլովը բառի այն փոփոխված ձևն է, որի հետ անբաժանելի կերպով կապված է հասուկ նշանակություն, ֆունկցիա»։ Մասնավորելով իր խոսքը հայցական հոլովի վրա, Մալխասյանցը մանրամասնորեն քննում է այդ հոլովը՝ աշխարհաբարում, հիմնավորում նրա ճանաչումը և հակադրվելով Մ. Աբեղյանին, կերակացնում. «Մի ձևականորեն և ո՛չ տեսականորեն չէ արդարանում հայցական հոլովի վերացումն աշխարհաբարի ստուգաբանության դասագրքերից, իսկ զործնականորեն ու մանկավարժական տեսակետից շատ մեծ վնասներ կստանա աշխարհի փերնագրում»։ Ինչպես հայտնի է, դիտական այդ վեճը վերջանում է նրանով, որ հայցական հոլովը վերականգնվում է հայոց լեզվի և՛ դասագրքերում, և՛ տեսական աշխատություններում։

Ստ. Մալխասյանցին շատ է հետաքրքրել ու զբաղեցրել մեր լեզվի ուղղագրությունը։ Նվ՛ղ դա հասկանալի է։ Իբրև մանկավարժ ու դիտական նա տեսնում ու զգում էր, որ ժամանակի ընթացքում մեծ չափերի է հասել գրության և արտասանության անհամապատասխանությունը, որ ուղղագրական համակարգում քիչ չեն շեղումներն ու անկանոնությունները, որ մեր լեզվի դարգացման արդի փուլում ուղղագրության միասնականացումը դարձել է խիստ անհրաժեշտություն։ Նա հոգիվածներ է գրել ուղղագրության ամենատարբեր իրողությունների վերաբերյալ, վիճել անվանի հայագետների հետ, հակադրվել շատերին, համարձակորեն առաջ քաշել ու մեծ կրքով պաշտպանել իր առաջարկներն ու տեսակետները։ Գնահատելի է, որ նա շատ հարցերում ճիշտ էր։ «Մի հնչյունին մի գիր» հոդվածում²³ ներկայացնում է հայերենի ուղղագրության դիտական ու գործնական հիմունքները, սահմանում ու հիմնավորում մի հնչյունին մի գիր սկզբունքը՝ նորմալ չհամարելով այն, երբ մի հնչյունին համապատասխանում է երեք գիր, ինչպես՝ դժուար, նալ, ծու, փոխաճակ՝ դժվար, նավ, ծով։ «Լեզվային հարցեր» հոդվածում²⁴ հակադրվելով Մ. Աբեղյանին, գտնում է, որ միանգամայն սխալ է է և օ տառերը գործածությունից հանելը. «Դա ստեղծում է նոր դժվարություն, երկարացնում է գրությունը, առաջ է բերում գրության անկայուն ձևեր (վոտ, բայց՝ անոտ, եգր, բայց՝ ծովեգր), դանդաղան բացառություններով»։ Գիտենք, որ Տեղմինաբանական կոմիտեն 1940 թ. հատուկ որոշումով վերականգնեց հայոց այբուբենի և գրության մեջ «է» և «օ» տառերը, որպես սխալ հանված։

Արժեքավոր հոգիվածների մի շարք նվիրված է հայ գրական լեզվի մշակման ու զարգացման հարցերին։ Հայտնի են, օրինակ, «Բազմավեպը» և Կովկասի հայ լրագրության լեզուն²⁵, «Մի քանի խոսք մեր երկու գրական լեզուների մերձեցման մասին»²⁶, «Մշակը» և հայերեն լեզուն²⁷, «Պետականություն և լեզու»²⁸ և ուրիշ հոգիվածներ, որոնց մեջ գնահատվում են հայոց լեզվի զարգացման գործում հայ պարբերականների գործադրած ջանքերը, ներկայացվում արևելահայ ու արևմտահայ գրական լեզուների էական տարբերությունները, զրվում լեզվի վրա հսկողություն ունենալու հարցը և այլն։

Ստ. Մալխասյանցը, այնուամենայնիվ, ամենից շատ և ավելի երկար զբաղվել է հայոց լեզվի բառագանձով։ Բառագիտության և մանավանդ բառարանագրության բնագավառներում նա արդեն մի փթիսարի մեծություն է։

23 «Արոր». 1910, № 1, 2:

24 «Մարտակոչ». 1924, № 10, 11:

25 «Մշակ». 1895, № 108, 109:

26 «Արարատ». 1898, № 3—4:

27 «Մշակ». 1911, № 268:

28 «Ժողովրդի ձայն». 1919, № 52, 53:

Բառագիտության տեսական հարցերի վերաբերյալ իր մտքերն ու պատկերացումները արտահայտել է առանձին հոդվածներում, սարբեր բառարաններին նվիրված գրախոսականներում և հատկապես իր կազմած բառարանների առաջաբաններում: Նա միանգամայն ճիշտ է գնահատել բառապաշարի դերն ու նշանակությունը ժողովրդի կյանքում, ստույգ որոշել նրա տեղը լեզվի համակարգում: Բառապաշարը լեզվի երկու հիմնական բաղադրիչ մասերից մեկն է, նրա շինանյութը, նրանով է որոշվում լեզվի վիճակի պատկերը: Այն ավելի արագ է փոխվում, որովհետև ավելի սերտորեն է կապված կյանքի հետ: Կյանքի մեջ տեղի ունեցող ամեն մի փոփոխություն արտահայտվում է բառերի միջոցով: «Բառերի միջոցով մենք կարող ենք հասկացություն կազմել որևէ ժողովրդի քաղաքակրթության ընթացքի մասին», — գրում է Մալխասյանը²⁹: «Լեզուն մտքի արտահայտիչն է բառերի միջոցով», — ասում է մեկ ուրիշ տեղ³⁰:

Լեզվի բառազանձի մասին այսպես ճիշտ ու բարձր կարծիք ունենալով՝ Մալխասյանը ձեռնամուխ է լինում բառարանագրական չափազանց դժվար դործին և դառնում հայ ամենախոշոր բառարանագիրներից մեկը:

Առաջին բառարանը, որի կազմելուն մասնակցել է որպես հեղինակ, «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան» է³¹ (հեղինակակցություն՝ Մ. Աբեղյանի, Տ. Հովհաննիսյանի և ուրիշների): Շուրջ 1100 բառ ու տերմին պարունակող այս բառարանը արժեքավոր է նրանով, որ ա) կազմվել է հեղինակային կոլեկտիվի կողմից՝ տարբեր բնագավառների մի շարք մասնագետների մասնակցությամբ. «Սա մի հաղվագյուտ օրինակ է հավաքական մտավոր աշխատանքի»³², բ) առաջինն է իր տեսակի մեջ, գ) առաջարկված բառերից ու տերմիններից շատերը հաջող լինելով՝ արժանացել են համընդհանուր ճանաչման և դարձել գործածական³³: Դրանցից են՝ իրավարար (арбитр), հայց (иск), հայցավոր (истец), անմեղսունակ (невменяемый), վերգիր (опись), սաղրանք (подстрекательство), իրավախախտում (правонарушение), մեղսակից (совиновник), դատվածություն (судимость), իրավասություն (юрисдикция) և այլն:

Հաջող են նաև Մալխասյանցի երկու ուրիշ բառարանները՝ «Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների» (1925) և «Հայ-ռուսերեն բառարան երկաթուղային տերմինների» (1925): Այս երկու բառարանների հեղինակները նույն մարդիկ են՝ Ստ. Մալխասյանցը, Լ. Տեր-Միքայելյանը, Ն. Մամիկոնյանը և Ն. Տեր-Միքայելյանը: Երկուսն էլ իրենց տեսակի մեջ առաջինն էին՝ «սահմանված սպասարկելու երկաթուղային գծի հաշվական մասի կարիքները»³⁴: Միայն Ռուս-հայերեն բառարանում թարգմանվել կամ ստեղծվել են մոտ 5800 բառ-տերմիններ, որոնց մի մասը այսօր էլ հաջողությամբ գործածվում է:

Ստ. Մալխասյանցի բառարանային ամենախոշոր ու ամենաարժեքավոր դործը «Հայերեն բացատրական բառարան» է: Այն մեծ հայագետի գիտական ստեղծագործության գլուխգործոցն է, հայ դասական բառարանագրության կոթողներից մեկը, հայ լեզվաբանության սովետական շրջանի վիթխարի նրվաճումը: Քառահատոր մեծածավալ այս բառարանի վրա հեղինակն աշխատել է 13 տարի՝ սկսած 1922 թ.:

Բառարանը լույս աշխարհ էկավ մի այնպիսի ժամանակ, երբ նրա կարիքը շատ էր զգացվում: Առաջին չավագույն բացատրական բառարանի (վենե-

29 «Մշակ», 1910, № 244:

30 Հայերեն բացատրական բառարան. հ. 1, էջ է:

31 Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան. Թիֆլիս, 1919:

32 Նույն տեղում, էջ 11:

33 Այս բառերի ու տերմինների մի մասը թեև հայտնի էր մինչև այդ, փաստորեն պաշտոնական ճանաչում գտավ այս բառարանում:

34 Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների. Թիֆլիս, 1925, էջ VI:

տիկյան երկհատոր «Նոր Հայկազյան բառարան») տպագրությունից (1836—1837) անցել էր մեկ հարյուրամյակից ավելի ձիշտ է, այդ ժամանակահատվածում տպագրվել են հարյուրից ավելի բառարաններ, բայց դրանք կամ խիստ համառոտ էին, կամ բնույթով տարրեր (թարգմանական, մասնագիտական և այլն) և, հասկանալի է, հալոց լեզվի բառապաշարի խիստ սահմանափակ ընդգրկումով, բառիմաստների մշակութային ոչ բարձր որակով։ Ասենք նաև, որ «Նոր Հայկազյան բառարանը» հիմնականում արտացոլում էր դարարարի բառամթերքը։ Բառարաններ սիրող մեր ժողովուրդը անհամբեր սպասում էր բացատրական նոր բառարանի, որը համակողմանիորեն բավարարի իր մեծ պահանջները և իր որակով արժանի լինի «Նոր Հայկազյան բառարանի» կողքին զրկելու Հենց ձիշտ տղայիս ժամանակ բոլոր այդ պահանջները լիովին բավարարելու եկավ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը», որ հրատարակվել է 1944 թ. (I, II, III հատորներ) և 1945 թ. (IV հատոր), 245 տպագրական մամուլի ծավալով։ Երկրորդ անգամ տպագրվել է Բեյրութում 1955—1956 թթ. (լուսատիպ)։

Բառարանը արժանիքներ ու առավելություններ շատ ունի, որոնց մասին այստեղ խոսել հնարավոր չէ։ Դրանցից կրնալ ենք միայն յոթը։

1. Յավալով ու պարունակությամբ այս բառարանը չի ունեցել իր մրցակիցը։ «Այս բառարանը,— զրել է հեղինակը,— պարունակելու է հայերեն լեզվով զրկած ու խոսված բոլոր բառերը մեր մատենագրության սկզբից մինչև մեր ժամանակները, այսինքն՝ բառամթերքները դարարարի, ստորին դարարի, ռամկորենի, արդի դրական լեզվի և զավառական բարբառների՝ իրենց ճարտարություններով, հին և նոր ժամանակի փոխառյալ բառերը եվրոպական կամ արևելյան լեզուներից» (էջ է)։

Այսքան հարուստ բառամթերք ունենալու համար նա իբրև հիմնադրյուր ընտրել է 10 լավագույն բառարան և չրացուցիչ օգտվել թարգմանական, մասնագիտական շատ բառարաններից ու տերմինաբաններից։ «Այս աղբյուրներից զուրս ինքս կարողացել եմ հավաքել մի քանի հեղինակներից (Պոռյան, Ճուղուրյան, Գամառ-Քաթիպա, Հ. Թումանյան և այլն), ժողովրդական երգերից և իմ մայրենի Ախալցխայի բարբառից, ինչպես նաև սովետական ժամանակի հայ մամուլից ու գրականությունից բառեր» (էջ ԺԱ—ԺԲ)։ Ահա այս բոլորի շնորհիվ նրան հաջողվել է բառարանում ընդգրկել մոտ 120 000 բառ, մի քանակ, որ չի ունեցել մեր բառարաններից ոչ մեկը մինչև այդ։ Որպեսզի գաղափար կաղմենք այս բառարանի բառամթերքի հարստության մասին, կատարենք մի փոքրիկ համեմատություն։ վերցնելով ԲԹ-ով և ԲԺ-ով սկսվող 100 բառ (ԲՊաղտիս, Բթաչափ, Բթուլ, Բժաբեր, Բժշկապետ, Բժուր և այլն), համեմատենք ու տեսենք, թե այդ 100 բառից քանիսն է ընդգրկված Մալխասյանցի բառարանում և քանիսը նրանից առաջ ու հետո հրապարակված բացատրական հինգ բառարաններում։ ԲԹ-ով և ԲԺ-ով սկսվող բառերի քանակը «Հին Հայկազյան բառարանում» (1749) 20 է, «Նոր Հայկազյան բառարանում» (1836)՝ 30, Գ. Փեշտմալճյանի «Բառգիրք հայոց լեզվի» բառարանում³⁵ (1844)՝ 24, ՀՄՍՀ ԳԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (1963)՝ 53, է. Աղայանի «Արդի հայերեն բացատրական բառարանում» (1976)՝ 60, իսկ Ստ. Մալխասյանցի այս բառարանում՝ 76։

Այս բառարանում, որպես մի գանձարանում, անմահացել է աշխարհի հին լեզուներից մեկի՝ հայոց լեզվի բառամթերքի ողջ ճոխությունը։ Իսկ հարուստ բառապաշարի ընդգրկումը բառարանում ունի իր խորհուրդը. «Հայերեն լեզվի բառազանձի միատեղ հավաքումը բովանդակում է այն բոլոր մըտքերը, գաղափարները, գործողությունները, առարկաները, որոնցով ապրել է

35 Հին Հայկազյանի և Գ. Փեշտմալճյանի բառարանների բառերի քանակը վերցրել ենք Գ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմություն» (Երևան, 1965) աշխատությունից (տե՛ս էջ 413)։

հայ մարդը կամ որոնք մատչելի են եղել նրան ավելի քան 1500-ամյա ժամանակաշրջանում, ուրեմն տալիս են ընդհանուր գաղափար նրա կուլտուրական, տնտեսական, բարոյական և այլ զարգացման» (էջ է)։

2. Բառարանո հիմն և նոր ռեաբանության մի հարուստ գանձարան է և սրանով նույնպես մի եզակի գործ է հայ բառարանագրության մեջ։ Բառարանի համար իբրև հում նյութ կամ առաջին հանգիստացել են ոչ միայն մեր լեզվի բառերը, այլև ոճերը, դարձվածներն ու արտահայտությունները։ Հայտնի է, որ հայերեն շատ բառեր, մանավանդ եթե ունեն ժողովրդական լայն գործածություն, հաճախ են հանդես գալիս ոճական արտահայտություններում՝ որպես նրանց բաղադրիչ հիմնական տարր։ Ամեն մի բառով կաղմվում են մեծ քանակությամբ ոճեր ու ոճական արտահայտություններ՝ իրենց յուրահատուկ իմաստներով ու առումներով։ Հավաքել ու յուրաքանչյուր մալր բառի տակ ներկայացնել այդ ամենը՝ չափազանց դժվար, բայց և շատ դնահատելի մի գործ է։ Այս բառարանում հավաքված է ոճերի ու ոճական արտահայտությունների մի այնպիսի քանակ, այնպիսի հարստություն, որ չկա ոչ մի բառարանում։ Բոլոր ժամանակների ոճերի ու ոճական արտահայտությունների ընդգրկումը այս բառարանի մեծ նվաճումներից է, գլխավոր արժանիքներից մեկը։

3. Բառարանը մի եզակի երևույթ է բոլոր բառերի ու ոճերի գիտական մըշակման քե՛ր քաղաքանությանը, քե՛ր որակով։ Այստեղ մանրամասնորեն քննված ու բացատրված են ամեն մի բառի ու ոճի իմաստները, հաշվի են առնելով նրանց պատմական, աստիճանական դարգացումը, պահպանված է իմաստների փոփոխման տրամաբանական հաջորդականությունը։ Հեղինակը առաջին տեղում զետեղել է բառի «սկզբնական նշանակությունը (կենդանի լինի թե մեռած), հետո այս սկզբնական նշանակությունից ծագած հաջորդ նշանակությունը, այնուհետև երրորդը՝ չորրորդը... հաջորդաբար» (էջ ԺԳ)։ Սա խիստ դժվար և գիտական մեծ հմտություն պահանջող մի աշխատանք է, որ բացառիկ հաջողությամբ կատարել է հեղինակը։ Դրան հավասար դնահատելի է բառերի նորանոր առումների խոր ու բազմակողմանի ուսումնասիրումը, որի շնորհիվ հեղինակը հայտնաբերել է անհամար նոր իմաստներ։ Նա ամանրամասնորեն մշակել է բոլոր բառերը, իսկ ավելի ընդարձակ՝ իրենց բաղմիմաստությամբ աչքի ընկնող և հարուստ ոճաբանություն ու փոխաբերական մեծ գործածություն ունեցող բառերը։

4. Նշված է հիմն ու նոր փոխառությունների աղբյուրը և տրված է նրանց ստուգաբանությունը, որ նորություն է վերջին շրջանի այդ բնութի հալ բառարաններում։ Հայտնի է, որ մեր լեզուն իր ողջ գոյության ընթացքում հաղարավոր բառեր է փոխառել բազմաթիվ լեզուներից։ Փոխառությունները մըտել են թե՛ մերձավոր լեզուներից, թե՛ հեռավոր, թե՛ զրական ճանապարհով, թե՛ բանավոր։ Փոխառություններ կան, որ անցել են մեր լեզվին հնագույն ու հին ժամանակներում, կան և այնպիսիները, որոնք անցել են նոր և նորագույն շրջանում։ Բառարանում տրված են բոլոր հին ու նոր փոխառությունների ծագումը, թե որ լեզվի բառն է, նրանց ստուգաբանությունը, թե ինչ իմաստ է արտահայտել փոխառում լեզվում, այլև՝ փոխառության ճանապարհը, թե զըրանք ո՛ր լեզվից են անցել հայերենին, եթե մեր լեզվի մեջ մտել են միջնորդաբար։ Փոխառությունների գիտական ալպիսի մշակումը ամենևին էլ հեշտ գործ չէ և պահանջում է զգուշավորություն, հմտություն և վստահություն։ Հավանաբար այդ է պատճառը, որ նույնիսկ զրանից հետո հրատարակված մեր բացատրական բառարանների հեղինակները խուսափել են բառերի ծագումն ու ստուգաբանությունը տալուց։

5. Ըստ կատեգորիաների խմբավորված ու նշումներով տարբերակված են բառերն ու նշանակությունները։ Մալխասյանցը առանձնացնում է բառերի ու նշանակությունների հետևյալ կատեգորիաները՝ ա) մեռած, գործածությունից դուրս եկած, բ) մեռած, բայց հազվադեպ գործածվող, գ) բարբառային։ Այս տարբեր կատեգորիաների բոլոր բառերը «բանասիրական տեսակետից համարժեք են» և հավասար կարևորություն ունեն։ «Բայց մատենագրության մեջ նրանք համարժեք չեն. ոմանք լիարժեք են և գործածելի, մյուսներն անարժեք

են և ներկա լեզվում գործածվելու համար մեռած են» (էջ ԺԴ)։ Բնականաբար անհրաժեշտ է դառնում բոլոր բառերն ու նշանակությունները դաս դասել և հատուկ ցուցումներով տարրերակել այդ կատեգորիաները, որը և անում է հեղինակը՝ յուրաքանչյուր բառի կամ նշանակության առաջ դնելով նախապես ընտրած պայմանական նշանը։ Իսկ սա կարևոր նշանակություն ունի բառարանը գործածողին ուղեկցող դարձնելու և մեռած բառերն ու նշանակությունները սխալ գործածելուց նրան հեռու պահելու համար։

6. Տրվում է երկդիմի քննեցում ունեցող բառերի արտասանությունը։ Սա առաջին իսկ հայացքից փոքր թվացող, բայց բոլոր էություն էական նշանակություն ունեցող և շատ անհրաժեշտ մի նորություն է։ Սրա օգտակարությունը ավելի է զգալի դառնում, երբ իմանում ենք, որ հեղինակը արտասանությունը զրկել է այն դեպքում, երբ գրության ձևը չի համապատասխանում սովորական արտասանության կամ երբ գրությունը կարող է կարգացվել երկու կերպ, այսինքն, երբ միևնույն բառն ունի երկդիմի քննեցում։ Ինչ խոսք, բառերի արտասանությունը տալու անհրաժեշտությունը մասամբ առաջացել է նրանից, որ բառարանը զրկել և հրատարակվել է հին ուղղագրությամբ, որ, անշուշտ, բառարանի բնույթով չի պայմանավորված, ինչպես կարծում է հեղինակը։ Հասկանալի է, որ «ԳՈՅՆ», «ԿՈՅՍ» և նման բառերից հետո պետք է նշանակվեր ույ, որ ցույց պիտի տա, թե ոչ երկհնչյունը (հին երկբարբառը) պետք է կարդալ ույ։ Սա իր հերթին։ Բայց սա հիմնական պատճառը չէ։ Երբեմն միևնույն բառի տարբեր նշանակությունները ուղղակիորեն կապվում են այդ բառի տարբեր արտասանությունների հետ։ Օրինակ՝ Սպաս բառի սրսլաս արտասանությամբ հասկացվում է կերակրի անունը, իսկ ըստլաս՝ սպասավորություն։ Կամ ինչպես հեղինակն է ասում՝ խնդրում («որը») զույական անուն է, իսկ խրնդրված՝ ածական։ Բառեր էլ կան, որ երկու տեսակ արտասանություն ունեն (գրանցվել և գտնվել)։ Բառերի արտասանության նշանակումը ավելի անհրաժեշտ է դառնում, երբ նրկատի ենք ունենում բարբառային բառերը, որոնց գրության մեջ արտասանվողը-երը սովորաբար չեն գրվում։

7. Բառաբանը հայ բառաբանագրության նախորդ բոլոր նվաճումների յուրատեսական ամփոփումն ու կատարելությունն է։ Բառարանի մեջ տեղ դրած բառերը հիմնականում վերցված են այլ բառարաններից։ Հեղինակի վկայությամբ այս բառարանը «յուր մեջ ամփոփում է բոլոր այդ բառարանների բառամթերքը»։ Իսկ այդ բառարանների քանակը հասնում է 15-ի։ Սրանց «բառամթերքը», — գրում է նա, — մոծվել է այս բառարանի մեջ սակավ բացառությամբ»։ Ուրեմն՝ այս բառարանը բառամթերքի պարունակությամբ հավասարվում է այդ 15 բառարաններին (չհաշված ճյուղային ու մասնագիտական բառարաններից քաղած և իր իսկ հավաքած բառամթերքը)։ Բայց Մալխասյանցը միայն բառամթերքը չի վերցրել այդ բառարաններից։ «Բացատրական բառարանից» առաջ կային արտակարգ բարեխղճությամբ և մեծ հմտությամբ կազմված այնպիսի կատարյալ բառարաններ, ինչպիսիք են «Նոր Հայկադյան բառարանը», Հ. Աճառյանի «Արմատական բառարանը», Մ. Ջախջախյանի հայ-իտալերեն բառարանը («Բառգիրք ի բարբառ Հայ և Իտալական») և այլն, որոնց ամեն մի առավել կողմ, ամեն մի նվաճում իր արտահայտումն է գտել Մալխասյանցի բառարանում։ «Նոր Հայկադյան բառարանի»՝ գրաբարյան բառերի սպառիչ ու հիմնավոր բացատրությունները, պատմությունը (V դարից են, թե հետո) և ստուգաբանությունները, Մ. Ջախջախյանի բառարանի բառերի ընդարձակ ու բազմաճյուղ բառիմաստներն ու առատ հոմանիշները, «Արմատականի»՝ բառերի համաստի ստուգաբանություններն ու սրանց պատմությունները, Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանի» ու Հ. Աճառյանի «Գավառական բառարանի» ժողովրդախոսակցական ու բարբառային բառերի անհամար ոճերի ու արտահայտությունների արժանահավատ մեկնությունները և այլն, և այլն, իբրև թանկարժեք նվաճումներ անցել են Մալխասյանցի բառարանին։ Բայց անցել են ոչ մեխանիկորեն, ոչ առանց սովորող տարրերի զտման։ Հայ բառարանագրության

բոլոր արժեքավորը այս բառարանի մեջ է մտել Վգուշավոր ընտրությամբ, քրն-նություն բովով անցնելուց հետո: Իբրև հայ բառարանագրության լավն ու թանկարժեքը ամփոփող մի հարուստ գանձարան բառարանը դարձավ բոլորից կատարյալ:

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» արժանիքներն ու առավելությունները սրանցով չեն վերջանում: Մենք չենք խոսում, օրինակ, բառերի քերականական բնութագրումների, բանասիրական ցուցումների, բառերի ամեն մի կենդանի նշանակության համար բերվող օրինակների և այլնի մասին:

Անշուշտ, սխալ կլինի կարծել, թե այս բառարանը մի անթերի գործ է, թե սրա մեջ չկան թերություններ: Հեղինակն ինքը այդ կարծիքին չէր, երբ գրում էր, թե «Բնավ ես չեմ կամենում ասել, թե բառարանս լիակատար է և առանց պակասությունների» (էջ ԺԹ): Կարելի է նշել, օրինակ, միջին հայերենի և մեր լեզվի վերջին շրջանի բառամթերքի ոչ լրիվ ընդդրկումը, հիմն ուղղագրությամբ տպագրությունը և այլն: Բայց եղած թերությունները կամ, ինչպես հեղինակն է ասում, պակասությունները ամենևին չեն խցեցնում այս դասական գործի արժեքը:

«Հայերեն բացատրական բառարանը» մեծարժեք աշխատություն է, հիանալի կոթող, թանկագին մի գանձ և ծանրակշիռ ներդրում հայագիտական գրականության մեջ: Պետական մրցանակը այդ դասական գործի արժանի գնահատումն էր:

Ստեփան Մալխասյանցը մեր ժամանակի ամենաբեղմնավոր դիտնականներից է, հայագիտության անխոնջ ու բազմապատկ մշակներից մեկը: Նրա բազմաթիվ ու բազմաբնույթ գիտական բարձրարժեք ստեղծագործությունները մեծապես նպաստել են հայագիտության զարգացմանը՝ հանդիսանալով նրա անկապտելի գանձերը, իսկ մեր քանիսը՝ բանասիրության ու հայ լեզվաբանության ոսկյա ֆոնդի զարդերը:

СТЕПАН МАЛХАСЯНЦ

(К 125-летию со дня рождения)

А. В. ГРИГОРЯН

(Резюме)

Выдающийся филолог, лингвист и лексикограф Степан Малхасянц (1857—1947) более шести десятилетий своей жизни отдал арменоведению и обогатил его замечательными работами. Ученому принадлежат образцовые переводы на ашхарабар и ценнейшие исследования трудов Мовсеса Хоренаци и Павстоса Бузанда. Наиболее велики заслуги Ст. Малхасянца в области лингвистики. В его интересы входили грамматическая система грабара, развитие литературных языков ашхарабара, морфологические категории современного армянского языка, лексикология и этимология, диалектология, орфография, стихосложение, язык древних исторических сочинений и печати, лексикография. При соавторстве ученого были составлены ценные словари («Настольный русско-армянский юридический словарь», 1919, «Русско-армянский словарь железнодорожных терминов», 1925). Четырехтомный «Армянский толковый словарь» Ст. Малхасянца—шедевр его научной деятельности, памятник армянской классической лексикографии, большое достижение армянской лингвистики советского периода.